



**ՀԱՅԱՐԱՍՅԱԿԻ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ
ՀԻՄՆԱԳՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ**

Մամլո հաղորդագրություն

5 օգոստոսի, 2008թ.

**Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ընդհանուր ժողովը ընդունեց
ՀՄՀ-Հայաստանի Շահառուների խորհրդի ընտրությունների կարգը**

Այսօր Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան ՊՈԱԿ-ը, Շահառուների խորհուրդի (ՇԽ) հետ համատեղ, հրավիրել էին հասարակական կազմակերպությունների, Ջրօգտագործողների ընկերությունների, ֆերմերների խմբերի և քաղաքացիական հասարակությունը ներկայացնող այլ կազմակերպությունների ընդհանուր ժողով, որը քննարկեց և հաստատեց ՇԽ ընտրությունների կանոնակարգի նախագիծը և ձևավորեց ընտրական հանձնաժողով՝ կազմակերպելու 2008թ-ի սեպտեմբերի 27-ին կայանալիք ՇԽ կազմի ընտրությունները:

ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի ներկա կազմի լիազորությունների ավարտը համարվում է 2008թ.-ի սեպտեմբերի 29-ը: Երկու տարի առաջ այդ օրը պաշտոնապես ուժի մեջ մտավ Հայաստանի և ԱՄՆ կառավարությունների միջև կնքված Համաձայնագիրը: ՀՄՀ-Հայաստանի Կառավարման համաձայնագրի պահանջի համաձայն՝ Համաձայնագրի յուրաքանչյուր տարում տեղի է ունենում ՇԽ կազմի ընտրություն, որի արդյունքում ձևավորվում է 15 հոգանոց մարմին, ուր ներկայացված են ոչ կառավարական և ոչ առևտրային կազմակերպություններ: Այսօր գործող Շահառուների խորհուրդն ընտրվել է 2007 թվականի սեպտեմբերի 29-ին փակ, գաղտնի քվեարկությամբ, որին մասնակցել է շուրջ 250 հետաքրքրված հասարակական կազմակերպություն: Խորհրդի 15 անդամները ներկայացնում են ֆերմերների, ջրօգտագործողների ընկերությունների, իրավապաշտպան, երիտասարդական և այլ հկ-ներ: Նրանցից 3-ը ներկայացնում են Շիրակի մարզը, մեկը՝ Լոռիին:

ՇԽ-ն մի մարմին է, որի շնորհիվ քաղաքացիական հասարակությունը և համայնքների ներկայացուցիչները հնարավորություն ունեն տեղեկանալ ՀՄՀ-Հայաստան ծրագրին, դրա իրականացման ընթացքին, մասնակցել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվող ընտրական և գնահատող հանձնաժողովների աշխատանքներին, ձեռք բերել և տարածել ծրագրին առնչվող նյութեր: Նրանք նաև մասնակցում են ծրագրին վերաբերող կարևոր հարցերի քննարկումներին՝ ներկայացնելով սեփական նկատառումներն ու առաջարկությունները: Լինելով խորհրդակցական մարմին՝ Շահառուների խորհուրդն իր կազմից 5 անդամների պատվիրակում է Կառավարման խորհուրդ՝ անմիջականորեն մասնակցելու ծրագրի կառավարման և որոշումների կայացման գործընթացին:

ՇԽ գործունեության, ինչպես նաև՝ ընտրական կարգի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք այցելել

www.mca.am

###

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար: